«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՌԵԿՏՈՐԱՏԻ

ՈՐՈՇՈՒՄ

15 Ապրիլի 2022, N 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԵՎ ՑՎԻԿԱՈՅԻ ԿԻՐԱՌԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՄԲ, ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ (DAAD) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԱՍԻԱՅՈՒՄ ԵՎ ԿՈՎԿԱՍՈՒՄ ԹՎԱՅԻՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ» (IDEA) ՆԱԽԱԳԾԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱՅԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՆԵՐԴՐՎՈՂ ԿՐԿՆԱԿԻ ԱՍՏԻՃԱՆԱՇՆՈՐՀՄԱՆ ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ («INFORMATICS AND MANAGEMENT») ՏԱՐԵԿԱՆ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՁԵՎԱՎՈՐՎՈՂ ԱՌԱՋԻՆ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԽՄԲԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՁԵՌՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լսելով և քննարկելով Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի և Ցվիկաոյի կիրառական գիտությունների համալսարանի համագործակցությամբ, Գերմանական ակադեմիական փոխանակման ծառայության (DAAD) ֆինանսավորմամբ իրականացվող «Ասիայում և Կովկասում թվային կրթության միջազգայնացում» (IDEA) նախագծի շրջանակներում կառավարման և ինֆորմատիկայի ոլորտում ներդրվող կրկնակի աստիճանաշնորհման մագիստրոսական կրթական ծրագրի («Informatics and Management») տարեկան ուսման վարձի չափը սահմանելու և ձևավորվող առաջին ակադեմիական խմբի ուսանողներին ուսման վարձի զեղչ տրամադրելու մասին հարցը՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության ռեկտորատը **որոշում է**.

1. «Ասիայում և Կովկասում թվային կրթության միջազգայնացում» (IDEA) նախագծի շրջանակներում կառավարման և ինֆորմատիկայի ոլորտում ներդրվող կրկնակի աստիճանաշնորհման մագիստրոսական կրթական ծրագրի («Informatics and Management») տարեկան ուսման վարձի չափը սահմանել 700.000 (յոթ հարյուր հազար) ՀՀ դրամ:
2. Հաշվի առնելով, որ կառավարման և ինֆորմատիկայի ոլորտում կրկնակի աստիճանաշնորման մագիստրոսական ծրագիրը Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում իրականացվելու է առաջին անգամ, կրթական ծրագրի հանդեպ շահառուների հետաքրքրվածությունը բարձացնելու նպատակով առաջին տարվա Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա քաղաքացի բոլոր ուսանողների համար կիրառել ուսման վարձի զեղչ 50 տոկոսի չափով:

Ռեկտոր՝ **Դիանա Գալոյան**

2022 թ. ապրիլի 15
Երևան